**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3.1**

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

«08» 02. 2018թ.

ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ.Գասպարյան(ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ ԹՎ ԻԾ պլանավորման և ապահովման բաժնի պետ, գնդապետ Զ.Մելիքյան

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կույտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռուստյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյանը

Բացակայում է՝ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Սարգիս Նիկոլյան

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Տ.Աբրահամյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

1. Մասնակիցների՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակցի՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերի պայմաններին, բացառությամբ ներքոհիշյալ մասնակցի՝

-,Սոֆի> Գրուպ> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող հրավերով պահանջվող փաստաթղթերից բացակայում են նախկինում կատարած նմանատիպ պայմանագրերը, այդ պայմանագրերի հանձնման-ընդունման արձանագրությունները, իսկ ներկայացված հաշիվ ապրանքագրերում առկա են ապրանքների մատակարարման պայմանագրի հաշիվ-ապրանքագրեր և սույն ընթացակարգին հայտ ներկայացնելու օրվանից հետո դուրս գրված հաշիվ-ապրանքագրեր, որոնք չեն համապատասխանում հրավերի պայմաններին:08.02.2018թ. մասնակցին առաջարկվել է օրենսդրությամբ սահմանված ժամկետում և կարգով շտկելու անհամապատասխանությունը: Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը:

Քանի որ 02.02.2018թ. ստացվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող, բացառությամբ Ա/Ձ Արգար Ավետիսյանի, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պատեական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ուներ 1507665 ՀՀ դրամի չափով, ուստի վերջինիս հայտը գնահատող հանձնաժողովի որոշմամբ մերժվեց, իսկ <Սոֆի Գրուպ> ՍՊԸ-ի մասով, համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացության, հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից< ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց առաջարկել մասնակցին օրենսդրությամբ սահմանված կարգով շտկելու անհամապատասխանությունը:<Սոֆի Գրուպ> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը: Ի գիտություն՝ Ա/Ձ Արգար Ավետիսյանը նույնպես շտկել է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պատեական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների մասով տեղ գտած անհամապատասխանությունը, սակայն համաձայն օրենսդրության, վերջինիս հայտը մերժվել է:

Քանի Որ Ա/Ձ Արգար Ավետիսյանի հայտը մերժվել է, ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել <Սաթի> ՍՊԸ-ն:

**08.02.2018թ** <Սաքի> ՍՊԸ-ին առաջարկվել է ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:
4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում <Սաքի> ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Քանի որ 09.02.2018թ. ստացվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց <Սաքի> ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

1.2 **14.02.2018թ** Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Տ.Աբրահամյան)

Քանի որ 13.02.2018թ. «Սեյենա Սերվիս ՀՁ» ՍՊԸ 13.02.2018թ. բողոքարկել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի 3-րդ արձանագրության 2.3 կետով՝ ընկերության հայտի մերժման և 4.1 կետով՝ 3-րդ չափաբաժնով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը, ուստի Հանձնաժողովը որոշեց կասեցնել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգը և հանձնաժողովի նիստը հրավիրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշման հրապարակման օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| **Գնահատող** | Վ. Գասպարյան |
| **Գնահատող** | Հ.Մելիքյան |
| **Գնահատող** | Գ.Ռստյան |
| **Գնահատող** | Ա.Մաղաքյան |
| **Գնումները համակարգող՝** | Տ.Աբրահամյան |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5**

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «16» 04. 2018թ.

ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ.Գասպարյան(ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ ԹՎ ԻԾ պլանավորման և ապահովման բաժնի պետ, գնդապետ Զ.Մելիքյան

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռնտյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյանը

Բացակայում է՝ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Սարգիս Նիկոյան

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Տ.Աբրահամյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

1. Մասնակիցների՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակցի՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին «Սելենա Սերվիս ՀՁ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և դրանցում բացակայում է նմանատիպ պայմանագրի հանձնման ընդունման արձանագրությունները կամ բարեխիղճ կատարման տեղեկանքը: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ մասնակցին առաջարկվեց օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկելու անհամապատասխանությունը: Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը:

Քանի որ 12.04.2018թ. ստացվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց Սելենա Սերվիս ՀՁ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

1.2 **18.04.2018թ** Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Սելենա Սերվիս ՀՁ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Վ. Գասպարյան

Գնահատող Ձ.Մելիքյան

Գնահատող Գ.Ռստյան

Գնահատող Ա.Մաղաքյան

Գնումները համակարգող՝ Տ.Աբրահամյան